№ 242 Դեկտեմբերի 29 1881 Դեկտեմբերի 29 № 242

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

այտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

### ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՒՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով։

ՊՐՈԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Կանոններ տնային մատեանների։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ —ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԿԱՆՈՆՆԵՐ

(Շարունակութիւն)

10) Թիֆլիս եկող իւրաքանչիւր անձն պարտաւոր է տալ այն կառավարչին կամ տիրոջը, որի տան մէջ կը կանգնի, իր անցագրի հետ միասին տեղեկութիւններ իր կնոջ և փոքր երեխաների մասին, եթէ ունի, սպիտակ գոյնի հացէի թերթիկների վրա, որոնց նրան կը յանձնէ տան տէրը։ Հացէի թերթիկների մէջ եղած հարցերով պահանջած տեղեկութիւնները պէտք է քաղվեն անցագրից կամ վկայագրից և այլն։ Տան տէրը կամ տան կառավարիչը հացէի թերթի վրա գրած տեղեկութիւնները տնային մատեանների մէջ մտցնելուց յետոյ, պէտք է թերթիկները ուղարկէ պօլիցիական բաժինը։

11) Թիֆլիսի մէջ պօլիցիական մի բաժնից միւս բաժինը տեղափոխվող անձը պարտաւոր է տալ տան տիրոջը կամ կառավարչին հացէի երկու թերթիկներ. սպիտակ և կանաչ։ Երկու թերթիկներն էլ ուղարկվում են պօլիցիական այն բաժինը, որտեղից այդ անձը տեղափոխվում է։

Նկատ. Նոյն անձը բնակութեան նոր տեղը տալիս է իր մասին հացէի սպիտակ երկու թերթիկներ։

12) Երբ տան կեցողը տեղափոխվում է մի տանից միւսը պօլիցիական նոյն բաժնի սահմաններում՝ երկու տան տէրերն էլ ուղարկում են պօլիցիական բաժնին հացէի սպիտակ թերթիկներ իւրաքանչիւրը երկու օրինակ։

13) Երբ բարձրանում են կամ ցածրանում են աստիճանով, կոչումով, օրինակ մի չին են սանում, կամ վաճառականը մեշչան է դառնում, չին ստացող կամ մի այլ կոչումի փոխված անձինք պարտաւոր են դրա մասին յայտնել տան տիրոջը կամ տան կառավարչին, իսկ վերջինները այդ անձի, նրա կնոջ և ընտանիքի մասին պարտաւոր են տեղեկութիւն տալ պօլիցիային հացէի երկու թերթիկներով։

14) Թիֆլիսից դուրս գնացող անձանց մասին տան տէրերը կամ կառավարիչները իւրաքանչիւր անձի մասին հացէի երկու թերթիկով տեղեկութիւն պէտք է տան պօլիցիային։ Կանաչ թերթիկների վրա տեղեկութիւն է տրվում այն անձանց մասին, որոնք տանից գնում են հիւանդանոց կամ կալանաւորվում են։ Մի և նոյն ժամանակ քաղաքից դուրս գնացողի մասին գրվում է, թէ նա որ քաղաքն է գնացել, հիւանդանոց տեղափոխվողի մասին գրվում է „հիւանդանոց“, կալանաւորվածի մասին „կալանաւորված է։“ Բացի այդ նոյն թերթիկների վրա պէտք է նշանակել, թէ այս կամ այն անձն երբ է դուրս գնացել, այսինքն տարին, ամիսը և թւականը։

§ 9. Եթէ պօլիցիան կիմանայ, որ տան կեցողները տեղափոխվելու ժամանակ ճիշդ տեղեկութիւն չեն տուել իրանց նոր բնակարանի մասին, կամ տան տէրերը, կառավարիչները և վերակացուները դանդաղութեամբ են հասցրել պօլիցիային հացէի թերթիկները, մեղաւորները ենթարկվում են հաշտարար դատաւորներից գրվող օրէնքների 58 և 59 յօդուածների համեմատ պատժին։

§ 10. Իւրաքանչիւր անձն կամ ընկերութիւն, որ Թիֆլիսի մէջ որ և է անշարժ կայքի կամ հիմնարկութեան տէր է դառնում, օրինակ առևտրական, արհեստական կամ գործարանական և այլն, նոյնպէս և նոր գործակալութիւնների, բանկային գրասենեակների, պանսիօնների և առհասարակ

---

# ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Փարիչանը առանձին նպատակ ունէր իր տիկնոջը այս գիշեր աւելի թովիչ, աւելի հրապուրիչ կերպարանքով ներկայացնել խանին, զրաղեցնել նրան այդ գեղեցիկ արարածով, մոռանալ տալ նրան իր բոլոր հոգսերը, իսկ յետոյ,—յետոյ ինքը գիտէր, թէ ինչ պիտի անէր...

Տիկինը չընդդիմացաւ. նա թոյլ տուեց, մի անզգայ խրթիկի նման, որ աղախինը ինչ որ կամենում է, անէ իր հետ։ Նա գիտէր հարեմական կարգերը, որոնց դէմ մեղանչել, բողոքել անհնարին էր։ Պէտք էր միայն հնազանդվել։

Աղախինը հագցրեց նրան մի թափանցիկ շապիկ, որ կարված էր մետաքսեայ նուրբ կերպասից, բաց-կարմիր գունով, որի վրա բանված էին հասմիկի մանր, մանիշակագոյն ծաղիկներ։ Օձիքը զարդարած էր մարգարիտներով, թեկերի բերանները զարդարած էին ոսկեայ փոքրիկ յուլունքներով, իսկ ստորին եզերքը՝ շարած էին ոսկեայ դրամներով, որոնք ամենաթեթև շարժման միջոցում զրնգ-զրնգում էին, ձայներ էին հանում։ Շապիկի ճեղքը, որ իջնում էր ուղղակի երկու ստինքների միջից, տեսանելի էր կացուցանում նրա սպիտակ, լիքը կուրծքը, որի վրա երևում էին արհեստական խալեր։ Շապիկի վրայից հագցրեց երկնագոյն թափշից կարված, կարճ չափքանը, որի եզերքը զարդարած էին ոսկեթել բանվածքներով, և որը, սեղմված վայելչահասակ իրանի վրա, երևան էր հանում նրա կազմուածքի բոլոր գեղեցկութիւնները։ Յետոյ միմանց վրա հագցրեց մի քանի ուռուցիկ շալվարներ, որոնք իւիկանների ձև ունէին, և կարծես, պատրաստված լինէին երկնքի թափանցիկ ամպերից, որոնց միջով կարելի է նշմարել բնութեան հրաշալիքը...։ Շալվարների ստորին եզերքը չորս մատ լայնութեամբ զարդարած էին մանր, արծաթեայ և ոսկեայ փողիկներով։ Ծնկներից ցած, ոտների մնացած մասը բոլորովին մերկ էր մնում, որովհետև շալվարները պօղում էին մինչև ծնկները միայն։

—Ձեր սրունքների վրա պէտք է կապել սև յուլունքներ, որովհետև սեր սպիտակ մարմնի վրա շատ սաղ է գալիս, ասաց աղախինը, երբ վերջացրեց իր տիկնոջը հագցնելը։

—Իսկ սև սրտի վրա ինչն է սաղ գալիս, հարցրեց տիկինը տխուր ժպտալով։

—Այդ խոշոր մարջանների չարած, կարմիր մանեակը, պատասխանեց աղախինը նոյնպէս ժըպտալով։

—Այո, ուղիղ այդպէս է, երբ մենք ստիպված ենք մեր հոգեկան բոլոր վէրքերը, բոլոր ցաւերը ծածկել գեղեցիկ, փայլուն կեղևի տակ...

Տիկնոջ աչքերը դարձեալ լցվեցան արտասուքով։

—Մի լաց լինիր, հոգիս, աղաչում էր նրան աղախինը.—ինչ լաց լինելու ժամանակ է. ձեր աչքերի սուրման բոլորովին կը եղծվի։

Տիկինը սկսեց խուլ կերպով հեկեկալ։ Լինում են բոպէներ, երբ մարդ մի առանձին թեթևութիւն է զգում, երբ լաց է լինում, բայց ինչու համար է լաց լինում,—ինքն իրան հաշիւ տալ չէ կարող։ Բայց տիկինը գիտէր, թէ ինչու համար է լաց լինում. նա խիստ խորին պատճառներ ունէր լաց լինելու...

—Բաւական է, դարձեալ աղաչում էր աղախինը.—այդպէս չէ կարելի, մի քանի բոպէից յետոյ կը յայտնվի խանը, ինչ կը լինի մեր վիճակը, եթէ ձեզ այդ դրութեան մէջ կը տեսնէ։

Փարիչանը բաւական խելացի էր, և մանաւանդ, խիստ նուրբ ճաշակ ունէր։ Հանգստացնելով իր տիկնոջը, նա սկսեց լրացնել նրա մնացած զարդարանքները։ Մարջանի խոշոր հատիկներից կազմված մանեակը, որ մի քանի տակ անցկացրեց նրա պարանոցով, և որի շարքերը իջնում էին նրա կիսամերկ կուրծքի վրա, մի առանձին հրապոյր, մի առանձին կախարդիչ գոյն տուեցին նրա գեղեցկութեանը։ Իսկ սև յուլունների շարքը նրա կլորիկ սրունքների վրա աքանչելի տեսք ունէին։

—Ո՞ւր են ձեր գոհարեղէնները, հարցրեց նա, երբ նկատեց, որ գոհարեղէնների արկղիկը իր տեղումը չէր։

—Ես նրան կոտրեցի, մինթէ դու չը տեսար, հարցրեց տիկինը։

—Տեսայ, հիմա որտեղ են։

—Ածել եմ այն մեծ մնդուկի մէջ, որ դրած է այն պատուհանում։

Աղախինը բաց արեց ցոյց տուած մնդուկը, դուրս բերեց ինչ որ պէտք էր տիկնոջ պաճուճանքի համար։ Այնտեղ կային ոսկեայ ծանր ապարանջաններ, կային ոսկեայ մատանիներ թանգագին ակներով, կային զանազան տեսակ մեծ և փոքրիկ քորոցներ ալմաստեայ և մարգարտեայ գըլխիկներով, կային թեքերի վրա կապելու բաղբանդներ,—բոլորը իրանց պատշաճաւոր տեղերը բռնեցին նրա մարմնի վրա։

Երբ ամեն ինչ վերջացած էր, տիկինը հեռացաւ հայելու առջևից, նստեց մի փոքրիկ թախտի վրա, բոլորովին յոգնած, ջարդված, կարծես թէ, վատակած և նուաղած լինէր մի ծանր աշխատութիւնից։ Այդ միջոցին Փարիչանը վեր առեց վարդաջրի սրուակը, սկսեց անուշահոտ հեղուկով ցողել սենեակի շուրջը։

Մինչ այստեղ զբաղված էին փառաւոր պատրաստութիւններով, կանանոցի բակը ներս մտան երկու հոգի։ Մէկը առջևից տանում էր գոյնզգոյն լատպեր, միւսը գալիս էր նրա ետևից։ Վերջինը խանն էր, իսկ լապտերը բռնողը՝ ներքինապետը, որին կոչում էին Կզլար-աղասի, այսինքն աղջիկների վրա իշխող։ Դա մի բարձրահասակ արաբ էր, վայրենի դէմքով և հսկայական կազմուածքով։ Գլխի և երեսի սպիտակ մազերը սև կաշու վրա աւելի սարսափելի էին դարձնում նրա կերպարանքը։ Գօտիից քարշ էր գալիս նրա ծանր սուրը։

—Ինչպէս են ձեզ մօտ, հարցրեց խանը։

—Ձեր մեծութեան չնորհիւ բոլորը լաւ են, ապրում են հանգիստ իրանց օթեակներում, այնպէս անմերձենալի, այնպէս փակված, որպէս հաւի ճուտը ձուի կեղևի մէջ, ասաց Կզլար-աղասին, ինքն էլ զարմանալով իր ազեղ համեմատութեան վրա։

—Միայն դրսի խռովութիւնները փոքր ինչ վախեցնում են իմ դառնուկներին։

—Այդ ոչինչ, եղուց առաւօտեան բոլորին վերջ կը դրվի, պատասխանեց խանը։—Միայն դուք այս գիշեր փոքր ինչ զգաստ եղէք մինչև լուսանալը։

—Կզլար-աղասին մեռած չէ, նա հարիւր աչքեր ունի, պատասխանեց ներքինապետը խրոխտալով։

—Իմ տիրոջ չնորհիւ ծիտն էլ չէ կարող նրա կանանոցի վրայից համարձակ թռչել։

Խանի ամրոցի, մանաւանդ կանանոցի պահապանները մեծ մասամբ ծերացած մարդիկ էին։ Արևելքցին մի առանձին յարգանք ունի դէպի ծերութիւնը, և նրան ամենայն հաւատարմութեան արժանի է համարում։ Բայց անապատի արարը այնքան երկարակեաց է լինում, որքան Նեղոսի կոկորդիլոսը։ Այդ կէտից նայելով «աղջիկների վրա իշխող» խրոխտալը բոլորովին անտեղի չէր. նա իր ծերութեան հասակում պահպանել էր թէ երիտասարդութեան ուժը և թէ քաջութիւնը։

Այսպէս խօսելով նրանք անցան կանանոցի բակից, մօտեցան Զուբէյդա խանումի կայարանի դռանը։ Ներքինապետը այստեղ կանգնեց, իսկ խանը առաջ անցաւ, մտաւ նախասենեակը, ուր տիկինը քաղցր, փաղաքշական խօսքերով ընդունեց նրան և ներս տարաւ իր սենեակը։ Խանը նստեց իր համար պատրաստված փառաւոր օթոցի վրա։ Նա բարեհաճեց հարցնել տիկնոջ առողջութիւնը։

—Իմ առողջութիւնը, իմ կեանքը, պատասխանեց տիկինը,—կախված է իմ տիրոջ ողորմածութիւնից. նրա մի քաղցր հայացքը ինձ անմահութիւն կը բաշխէ, նրա մի խօսքը կը փարատէ իմ սրտից աշխարհի բոլոր դառնութիւնները։ Ես նրանով եմ ապրում։ Եթէ մեռած ևս լինեմ, եթէ նա ոտք կոխելու լինի իմ գերեզմանի վրա, ես իսկոյն յարութիւն կառնեմ։ Իսկ այսօր որքան բախտաւոր եմ ես, որ նա բարեհաճեց ոտք կոխել իմ օթևանի անարժան չէնքի վրա։ Թող օրհնեալ լինի Աստուած, թող օրհնեալ լինեն նրա սուրբերը։

Տիկնոջ փոքրիկ ճառը չափից դուրս գրաւեց խանին։ Նա հարեմի իշխանի և կնոջ «տիրոջ»

ամեն տեսակ հիմնարկութեան, պարտաւոր է մի վկայագրի հետ սեփականութեան իրաւունքի մասին տալ տանտիրոջը կամ կառավարչին սպիտակ թերթիկների վրա այդ թերթիկների մէջ պահանջած բոլոր տեղեկութիւնները։

Այդ տեղեկութիւնները հասցէի թերթիկների մէջ գրելուց յետոյ տան տէրերը առաջ քան թէ նրանց ուղարկեն պօլիցիական բաժինը, պարտաւոր են բոլորը արձանագրել տնային մատեանի մէջ։

§ 11. Երբ մի հիմնարկութիւն տեղափոխվում է մի տանից միւս տուն մի և նոյն պօլիցիական բաժնի սահմաններում, պէտք է ձեռնարկվել նոյն կանոններով, որոնք սահմանված են մասնաւոր անձանց տեղափոխման համար։

§ 12. Երբ մի հիմնարկութիւն տեղափոխվում է քաղաքի մի բաժնից մի այլ բաժին, պէտք է ձեռնարկվել նոյն կանոններով, որոնք սահմանված են այդ դէպքում մասնաւոր անձանց համար։

§ 13. Եթէ հիմնարկութեան տեղափոխութիւնը չը կայացաւ, այդ դէպքում պէտք է նոյնպէս վարվել, ինչպէս և մասնաւոր անձանց հետ։

§ 14. Թերթիկներ հիմնարկութիւնների մասին ներկայացնվում են պօլիցիային բացի նրանցից, որոնք տրվում են այն անձանց մասին, որոնք ծառայում են այդ հիմնարկութեան մէջ Թիֆլիսում, կամ երբ վերջինները հիմնարկութեան հետ տեղափոխվում են մի տանից միւս տուն։

§ 15. Երբ հիմնարկութիւնը մի տիրոջից միւսին է անցնում, պէտք է յայտնել տան տիրոջը կամ տան կառավարչին, որտեղ գտնվում է այդ հիմնարկութիւնը, իսկ տան տէրը այդ բանը պէտք է յայտնէ տեղական պօլիցիական բաժնին յայտարելով թէ հիմնարկութիւնը ում ձեռքից ում ձեռքը անցաւ, ներկայացնելով անհրաժեշտ դօկումենտները նոր տիրոջ սեփականութեան իրաւունքի մասին։

§ 16. Եթէ հիմնարկութեան տէրը մեռնի և կայքը անցնի ժառանգներին, որոնց ազգանունները զանազան են, նրանցից իւրաքանչիւրի մասին պէտք է երկու թերթ ներկայացնել և իւրաքանչիւրի մէջ նշանակել թէ կայքի տեսակը և թէ այն, որ այդ կայքը մի քանիսի սեփականութիւն է։

---

## ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեկտեմբերի 5-ին

Ցանձնեցի պարոն Մնացական Առաքելեանցին մէկ հարիւր րուբլի, որ հատուցանէ ձեր խմբագրութեանը, և որ խնդրեմ ուղարկէք հայոց հարց պաշտպանող մէկ օրգանին։ Խնդրեմ տպէք ձեր պատուական լրագրի մէկ անկիւնում բաժնորդագին վճարողների ազգանունները, որոնք են. Յակովբ Խաչատրեան 8 րուբլի, Ալէքսանդր Ղուլեանց 4 ր., Ավանէս Պետրոսեանց 4 ր., Գէորգ Օվանէսեանց 3 ր., Ավանէս Ջաբարեանց 2 ր., Նիկոլայ Դօնդարով 1 ր. 50 կ., Ավանէս Բաղիրեանց 4 ր., Նիկոլայ Բուրջալեանց 3 ր., հաջի Խալամ Զէնալով 2 ր., Մաքսիմ Լվով 3 ր.՝ Յովսէփ Աղամալեանց 1 ր., Սարգիս Շախնազարեանց 2 ր., Ելենայ Վէյրերա 1 ր., Կոստանդին Կոստանդինով 1 ր., Ալէքսանդր Տէր Մկրտիչեանց 4 ր., Իվան Օրէխով 1 ր., Մէշաոի Ղարայ 1., Հայրապետ Պարոնեանց 2 ր., Պետր Մէղվէդև 1 ր., Աբասկուլի Յուսէնով 1 ր., Գասպար Տէր Մարգարեանց 2 ր., Համբարձում Դանիէլեանց 1 ր., Նարին Դօնդարեանց 1 ր., Յովսէփ Սարգիսեան 1 ր., Սաղաթել Սերգէյեանց 1 ր., Մանուչար Ավագեանց 1 ր., Եպօր Օգանէսով 1 ր., Մնացական Առաքելեանց 3 ր., Մինաս Ստեփանեանց 2 ր. 60 կ., Աւագ Թովմայեանց 1 ր., Մամիկոն Հայրապետեանց 2 ր., Կոստանդ Ղարագեօզով 1 ր. 80 կ., Լևոն Տէր Յակոբեանց 1 ր., Գրիգոր Շակեանեանց 1 ր., Ներսէս Քոչանեանց 1 ր., Մարգարա Շախնազարեանց 1 ր., Եարամիշ Եարամիշեանց 1 ր., Եգօր Ավէտիչ Գրիքուրով 1 ր., Աբել Ապրեսեանց 4 ր. 70 կ., Կարապետ Արզումով 1 ր., Իվան Վարդիգուլեանց 2 ր., Ալեքս Հախումեանց 1 ր., Իսրայէլ Բէգլարեանց 1 ր., Եղիշէ Նարաթեանց 1 ր., Ալեքս Մնացականեանց 1 ր., Սարգիս Միկիտեանց 1 ր., Աբրահամ Մէլիք-Աբրահամեանց 3 ր., Իսահակ Միրզեանց 1 ր., Աշչակ Եարամիշեանց 1 ր., Սողոմոն Տէր Ստեփանեանց 2 ր., Սամուէլ Օհաննէսեանց 1 ր., Կարապետ Կարաբլեանց 3 ր., Անյայտ ումն 2 ր. 40 կ.։ Ընդամենն 100 րուբլի։

Յակովբ Խաչատուրեանց

---

## ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ԲԱԳՈՒԻՑ 60 րուբլ պ. Քիւրքճեանի երեք հատ ժողովածուների համար, հետևեալ անձինքներից. Յովհաննէս Վարդիգուլեանցից 20 ր., Մամիկոն Հայրապետեանցից 20 ր., և Յակոբ Խաչատրեանից 20 ր.։ Այդ փողերը և ճանապարհի ծախսը 1 ր. 50 կ. երեք ժողովածուի համար, յանձնեցինք արդէն պ. Քիւրքճեանին։

—

ԲԱԳՈՒԻՑ պ. Սամուէլ Տարազդարեանցից ստացանք «Մշակի» բաժանորդագին ոչ թէ 10 րուբլ, այլ 11 րուբլ։ Պարոնը խնդրում է որ պահենք աւելորդ 1 րուբլ և եթէ ուրիշներն էլ կը սկսեն ուղարկել աւելորդ մի մի րուբլ, հէնց որ այդ փողերից կը կազմվի մի լրագրի բաժանորդագին, այսինքն 10 րուբլ, նուիրենք «Մշակի» մի համարը մեր կամքին համեմատ մի զարոցին կամ ընթերցարանին, կամ ուսանողներին։

—

Վիէննայի «Journal d'Orient» թերթը տպել է իր № 52 մէջ մեր առաջնորդող յօդուածը «Դարձեալ մի ապացոյց» վերնագրով։ Յօդուածը տրված է «Encore une preuve» վերնագրով և շատ լաւ է թարգմանված։

—

ԲԱԳՈՒԻՑ ստացանք 100 րուբլ որ նուիրողները խնդրում են մեզ յատկացնել մեր կամքին համեմատ այս կամ այն եւրոպական լրագրին որ պաշտպան է հանդիսանում հայոց դատին։ Նուիրողների ցուցակը տպում ենք ներկայ համարում։

—

Ստացանք բաժանորդագիր «Ժուրնալ դ'Օրիանի» համար պ. Յովսէփ Իզմիրեանցից, Ս. Պետերբուրգից 20 բուբլ և պ. Տէր-Վարդանեանցից Կիշնեվից 8 բուբլ։ Առաջվայ 559 բուբլ գումարի հետ կանի 587 բուբլ։

—

Ստացանք 10 բուբլ «Մշակի» բաժանորդագին պ. Մարտիրոս Տէր-Ստեփանեանից, Բագուից։ Պարոնը որ ինքն էլ գրվում է «Մշակի» մի օրինակին, այդ երկրորդ օրինակը խնդրում է մեզ ուղարկել համեմատ մեր հայեցողութեան թիւրքաց Հայաստանի ազգային մի հիմնարկութեան, որպէս իրանից նուէր։ Մենք կուղարկենք այդ օրինակը Վանի Կենտրոնական վարժարանին։

—

Պ. Յովսէփ Իզմիրեանց Ս. Պետերբուրգից, գրել է ինքն «Մշակին» բացի սորանից վճարել է մեզ 10 բուբլ «Մշակի» մի օրինակի համար, որ իր կողմից նուիրում է Ս. Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողներին։

—

«Русскій Курьеръ» հաղորդում է թէ գերմանական կառավարութիւնը շուտով կը յանձնի ռուսաց կառավարութեանը մի ֆրանսիացուն, Գոլլէնդէր ազգանունով, որ կալանաւորված է Բերլինում և որ մասնակից է եղել մարտի 1-ի եղեռնագործութեանը։

—

«Порядокъ» լրագիրը հաղորդում է որ դիտաւորութիւն կայ ոչնչացնել Ս. Պետերբուրգում հասցէների գրասենեակը։

—

«Кавказъ» լրագիրը իր № 283 մէջ տպեց գընդապետ Յակոբ Լազարեվի (հանդուցեալ գեներալի եղբայր) մի շատ հետաքրքիր յօդուած որ մանրամասն նկարագրում է թէ ինչպէս թիւրքաց հայերը հարստահարվում են քիւրդերից և թիւրք պաշտօնեաներից։ Յօդուածագիրը անհրաժեշտ է համարում թիւրքաց Հայաստանի համար ինքնավարութիւնը։ Նա պատմական կերպով ցոյց է տալիս որ Հայաստանի ինքնավարութեան միտքը յղացել էր արդէն ռուսաց կառավարութեան մէջ դեռ ևս Պետրոս Մեծի օրով։ Նոյն գաղափարը վերածնվել է Անմոռանալի Կայսր Ալէքսանդր Երկրորդի ժամանակ և Ռուսաստանին է վիճակված, դարձեալ, իրագործել այդ միտքը։

—

Ռուս լրագիրները հաղորդում են որ նոր տա-

---

բարձրութիւնից իջաւ ամուսնի աստիճանի վրա։ Նա անկեղծութեամբ բռնեց տիկնոջ ձեռքից, և նստացնելով իր մօտ, ասաց.

—Զուբէյիդա, դու այնքան խելացի ես, քո մէջ այնքան հարուստ հոգեկան գանձեր կան, որ չէ կարելի քեզ չը սիրել։ Դու այն կենդանի աղբիւրն ես, որ բղխում է Սահարայի ընդարձակ անապատի օասիսի մէջ, և դէպի որը խորին փափաքով վազում է յոգնած, նուազած ուղտորը իր ծարաւը յագեցնելու համար։ Դու այն բարերար արմաւենին ես, որ յագեցնում է նամենի աւազուտներում թափառող, սովատանջ ճանապարհորդի քաղցը։ Ես այդ անբախտներից մէկն եմ, Զուբէյիդա։ Ճակատագիրը հալածում է ինձ։ Ես վազեցի քեզ մօտ փոքր ինչ կաղդուրվելու, փոքր ինչ փարատելու իմ սրտի ցաւերը։ Ես վազեցի քեզ մօտ ապաստան գտնելու...

Տիկինը բոլորովին ապշած էր մնացել։ Նա իր ականջներին չէր հաւատում, որ այդ խօսքերը արտասանում է այն խիստ, զուսպ, վայրենի մարդը, որին կեանքի փափուկ կողմերը ամենևին ծանօթ չէին, որը սովորած էր միայն իշխել, հրամայել և ամեն մի ազնիւ զգացմունք իր ոտքերի տակ ջարդուփշուր անել։ Այժմ այդ ինչ անբնական փոփոխութիւն էր առաջ եկել նրա մէջ։ Տիկինը հասկանալ չէր կարողանում։ Նա միայն աչքերը խոնարհած, չէր համարձակվում նայել իր տիրոջ երեսին, զարմանում էր նրա խոնարհութեան վրա, տատանվում էր, և իր լեզուի բոլոր պերճախօսութեամբ, մի բառ անգամ չէր գտնում նրան պատասխանելու։

—Զուբէյիդա, մի զարմացիր, ասաց նա աւելի մեղմ ձայնով, և նրա ձեռքը չը թողնելով իր ափի մէջից։—Մի զարմացիր, կրկնեց նա,—ինչպէս ինձ չէ զարմացնում իմ դրութիւնը։ Ես այսօր, այս գիշեր միայն հասկացայ իմ թշուառութիւնը, հասկացայ, թէ ինչ ողորմելի արարած եմ ես։— Այս գիշեր, երբ թշնամին պատել է իմ չուրջը, երբ մահը կանգնած է իմ գլխի վրա, ես ինձ բոլորովին միայնակ և օգնութեան կարօտ եմ զգում, չը նայելով, որ հազարները սուրը ձեռքում սպասում են իմ հրամանին։ Աւա, Զուբէյիդա, այդ ինչ դրութիւն է։ Ինչու ես ոչ ոքին հաւատալ, ոչ ոքի վրա յոյս դնել կարող չեմ։ Ինչու ես մենակ եմ մնացել։

—Դու միշտ մենակ ես եղել... պատասխանեց կինը սառն կերպով։—Երբ որ թոյլ կը տաս ինձ խօսել ճշմարիտը և արդարը, ես կասեմ քեզ բոլորը։

—Խօսիր, մի ծածկիր, ես եկել եմ քեզ լսելու. քո ամեն մի խօսքը առողջարար բալասանի նման կը բուժէ իմ սրտի վէրքերը։

—Բայց կարող է և նշտարի նման ծակել...

—Թող ծակէ, թող աւելի ևս վիրաւորէ։ Բժշկի նշտարը առողջացնելու նպատակ ունի։

Տիկինը հրամայեց փարիշանին, որ սուրճ մատուցանէ, ղէյլան տայ, յետոյ հեռանայ։ Աղախինը վեր առեց սուրճի արծաթեայ ամանը կրակի վրայից, ածեց գեղեցիկ ֆինջանների մէջ, մօտեցրեց մէկը իր տիրոջը, միւսը իր տիկնոջը։ Մինչև նրանց խմելը, նա պատրաստեց անուշահոտ թամբաքուից թանզաղին ղէյլանը, դրեց խանի առջև, իսկ ինքը հեռացաւ, իր ետևից կողպելով դուռը։ Դուրս գալով մթին նախասենեակը, նա կծկուեցաւ դռան ետևում, սկսեց ականջ դնել։

—Ես ասացի, թէ դու միշտ մենակ ես եղել, շարունակեց տիկինը ընդհատված խօսակցութիւնը։—Որովհետև բռնակալը իր երկրպագուների, իր պաշտողների, իր ղողոքողների անհուն բազմութեան մէջ դարձեալ միշտ մնում է մենակ։ Նա ընկեր, բարեկամ, սրտակից, մտերիմ,— ոչ ոք չունի։ Նա չէ զգում իր թշուառ միայնակութիւնը, որովհետև իշխանութեան փառքը սև մառախուղի նման ծածկում է նրա աչքերից այն, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ ուղիղ է, ինչ որ աւելի օգտակար է։ Նա ապրում է յարատև խաբէութեան մէջ և չէ նկատում, որ ամեն ինչ իր չորս կողմում կեղծ է, պատիր է, փթած է։ Նա չէ զգում իր ոչնչութիւնը, որովհետև երբ հրամայում է,— ամեն ինչ կատարված է, և այդ պահում է նրան մշտական մոլորութեան մէջ։ Կենդանի միտքը, առողջ դատողութիւնը անծանօթ է մնում նրան, նրա համար որ, ամեն մի իրաւացի ընդդիմադրութիւն, ամեն մի խելացի հակաճառութիւն խորտակվում է նրա կոպիտ կամքի առջև։ Նա միշտ այն կարծիքի մէջ է մնում, թէ ինչ որ ցանկանում է ինքը, թէ ինչ որ հաճոյ է իրան,—այն է լաւը, արժանը, վայելուչը։ Եւ եթէ բախտի յաջողութիւնները այսպիսիներին փոքր ինչ շողոքորդում են, այն ժամանակ նրանք աւելի վայրենի են դառնում։ Նրանք կարծում են, թէ ամեն ինչ ստեղծված է միմիայն իրանց վայելչութեան համար, և ինչ որ իրանց հաճելի չէ, և ինչ որ չէ ծառայում իրանց, կարող են ոչնչացնել։ Նրանք իրանց միշտ անկարօտ են զգում, որովհետև միշտ սովորած են տեսնել իրանց շուրջը մի կեղծ պատրաստականութիւն։ Բայց խոնարհութեան մէջ անկեղծութիւն չը կայ, թէև ամեն ինչ խոնարհվում է նրանց առջև, որովհետև վերևից ճնշում կայ։—Բայց երբ բարձրանում է մի փոթորիկ, երբ հասնում է վտանգը, երբ զարկում է սոսկալի տագնապի բոպէն, այն ժամանակ շողոքորդների, երկրպագուների, կեղծ բարեկամների անհուն բազմութիւնը սև ուրուականների նման չքանում են, անհետանում են և մէկն էլ չէ մընում, որ բռնէ իր պաշտած մարդու ձեռքից։ Այդ բաւական չէ.— նրանք դառնում են ամենասարսափելի թշնամիներ...

—Բոլորը ճշմարիտ է... ասաց խանը, հոգւոց հանելով։—Ես երբէք բարեկամ չեմ ունեցել, ես միշտ մենակ եմ եղել, թէև շրջապատված անթիւ կեղծաւորներով։ Բայց ինձ թող մխիթարէ իմ տունը, իմ ընտանիքը, որ ինձ համար օտար չէ, որ ամենից մօտ է ինձ։

—Դու տուն ունես, բայց ընտանիք չունես, պատասխանեց տիկինը խստութեամբ։—Ընտանիքից ես ի զուր է քեզ մխիթարութիւն սպասել։

—Ե՞ս, ընտանիք չունեմ, բացականչեց նա գժվածի նման։—Ո՞վ ունի այնքան կնիկներ, որքան ես. ով ունի այնքան զաւակներ, որքան ես։ Մի գիշերվայ մէջ եօթը որդիներ ծնվեցան ինձ համար։

—Ոչխարների հօտի մէջ մի գիշերում երբեմն ծնվում է հարիւրը, բայց հօտը ընտանիք չէ կազմում։— Լսիր, խան, առաջ տարաւ նա իր խօսքը.—ես սկզբից քեզանից խոստմունք առեցի, որ չը պիտի բարկանաս ինձ վրա, երբ իմ բերանից կը լսես քեզ անսովոր, կծու խօսքեր։

—Ես չեմ բարկանայ։

—Ուրեմն կը շարունակեմ։ Ես ասացի, որ դու ընտանիք ևս չունես, որ դու զուրկ ես և ընտանեկան մխիթարութիւնից,—այդ խօսքը քեզ զարմացնում է, քեզ օտարոտի է թւում։ Դու մոռացում ես. ինչպէս կարող է մի մարդ զուրկ լինել ընտանիքից, որը հարիւրաւոր կնիկներ ունի, որը բազմաթիւ զաւակների հայր է։ Այդ բաւական չէ։ Ընտանիքի հիմքը սէրն է։ Կայ արդեօք սէր քո ընտանիքի մէջ։— Անկարելի է որ լինի։ Եթէ քո կնիկները սէր են ցոյց տալիս, այդ նրա համար է, որ կամ վախենում են քեզանից, կամ չողոքորդում են աւելի ընծաներ ստանալու համար։ Մթթէ դա մի և նոյն կեղծ յարաբերութիւնը չէ, որ դու ունես քո ծառաների, պաշտօնակալների ու հպատակների հետ, որոնք նոյնպէս խոնարհվում էին քեզ, շահերի կամ երկիւղի պատճառով։ Ոչինչ զանազանութիւն չը կայ։ Եթէ դու քննելու լինես քո կնիկների ամեն մէկի սիրտը, փոխանակ սիրոյ, կը գտնես նրանց մէջ խորին, դառն ատելութիւն դէպի քեզ։—Ի՞նչու։— Որովհետև նրանցից և ոչ մէկը իր յօժարութեամբ չէ կապվել քեզ հետ. կամ գերի է բերվել, կամ իբրև ընծայ է ստացվել, կամ փոդով է գնվել։ Եւ դու պահանջում ես դրանցից ճշմարիտ սէր, կարեկցութիւն, ցաւակցութիւն, հաւատարմութիւն և այն բոլոր գեղեցիկ յատկութիւնները, որ կարող է ունենալ լաւ կինը։ Դու իրաւունք չունես պահանջելու, քանի որ դու ինքդ չես սիրում նրանց։

—Ե՞ս, չեմ սիրում, գոչեց դժբախտ ամուսինը վրդովվելով։— Ինչ որ ուզում ես, ասա, Զուբէյիդա, այդ յանդիմանութիւնը գոնէ մի անգամ ինձ։ Ես սիրող սիրտ ունեմ։

—Քեզ այդպէս թւում է միայն, որովհետև դու չես հասկացել սիրոյ ճշմարիտ նշանակութիւնը, ասաց տիկինը, պահպանելով իր սառնասրտութիւնը։—Դու չես սիրում, դու միայն վայելում ես. իսկ այդ երկու բառերի մէջ ահագին տարբերութիւն կայ։ Դու վայելում ես քո կնիկների

րուց դիտաւորութիւն կայ հրատարակել Ս. Պետերբուրգում «Восточное Обозрѣніе» շաբաթաթերթը ռուսերէն լեզուով պ. Եաղրինցեվի խմբագրութեամբ:

—

«Հայոց Բարեգործական ընկերութեան» խորհուրդը յայտնում է Ընկերութեան անդամներին, որ տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար խմբագրած հրահանգի նախագիծը տպված է և դրա օրինակները կարելի է ստանալ պ. Յ. Զիթախեանցի դպրանոցում և պ. Ե. Ծատուրեանցի խանութում: Իսկ հրահանգի քննութեան համար կայանալի ընդհանուր ժողովի օրը և տեղը կը յայտարարվի առանձին:

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են մեզ: «Այստեղ մի նոր և ամենակեղտոտ սովորութիւն է առաջ եկել, ով ում հետ թշնամութիւն կամ կիրք ունի, իր վրէժը առնելու համար անանուն նամակներ է գրում նրան, լի ամեն տեսակ զզուելի խօսքերով: Այսպիսի նամակներ այստեղ երկու պարոններ ստացել են արդէն: Այս տեսակ նամակներից մէկը յայտնվեցաւ մեր օրիորդաց դպրոցում, որը ծածուկ դրել էին մի օրիորդի կարի թաշկինակի մէջ: Ցաւալի է, որ դպրոցում, այն ևս օրիորդները այս տեսակ անվայել բաներով են պարապվում, և տեսուչը կամ հոգաբարձութիւնը այնքան անհոգ են, որ ամենևին ուշադրութիւն չը դարձրին քննելու և պատժելու յանցաւորին:

—

Նոյնտեղից գրում են, որ ագուլեցիք վերջապէս հասկանալով բժիշկի անհրաժեշտութիւնը, վճռեցին մի բժիշկ բերել տալ Երևանից: Այդ մասին ստորագրութիւն բացվեցաւ և մի ժամում մօտ 300 ռուբլի հաւաքվեցաւ: Ստորագրութիւնը յաջող կերպով շարունակվում է:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, դեկտեմբերի 20-ին

Մի քանի ժամանակից ի վեր մանաւանդ Մասիսը սովորութիւն է չինել իր համար մի նոր տեսակ գրականական խարդախութիւն. ամեն օր արտատպում է Մշակից կարևոր լուրեր և նամակներ ու այդպիսով լցնում իր սիւնակները առանց սակայն յիշատակելու առած աղբիւրը: Այսպիսի մի լիրը բանագողութիւն և զանցառութիւն միայն Կ. Պոլսի լրագիրը կարող է թոյլ տալ իրան, որի խմբագրողները ծխական դպրոցների թերուսներն են:

Նիկողայոս Թիւլպենտչեանց, որին տանել է տուել Մանկունին իբրև իրան վաղուց յայտնի մի ճարպիկ ինտրիգան, շարունակում է նամակներ գրել Վաղարշապատից «Թէրճիմանի Էֆքեար» խայտառակ լրագրին (Ազարեանի և Հասունի օրգան) յարձակվելով ռուսահայերի և մանաւանդ Մշակի վրա, իսկ մի և նոյն ժամանակ մեծ մեծ գովասանութիւններ շռայլելով Մանկունու «ազգասիրութեան» և «տաղանդի» վրա:

Մի նոր տեսակ երևոյթ է նշմարվում այժմ տաճկահայ բողոքականների մէջ, այն է թշնամական շարժումներ դէպի միսիոներները, որոնք ձգտում ունեն ջլատել նոցա մէջ ազգասիրական հակումները: Այդ շարժումների մէջ մասնակցողները գլխաւորապէս գաւառացի հայ-բողոքականներն են, որոնց նշանաբանն այն է, թէ մնալով հաւատարիմ բողոքական կրօնին, պիտի մնան մի և նոյն ժամանակ և հարազատ հայեր:

«Daily News»-ի թղթակից Օգոնովան, որը բանտարկված էր ամբողջ շաբաթ թիւրքաց կառավարութեան հրամանով, սուլթանի մի քանի ադիւտանտների ներկայութեամբ հայոց առթիւ սուլթանի դէմ խօսելու համար, այսօր բանտից արձակվելով վեց ժամվայ մէջ արտաքսվեց Թիւրքիայից: Գնալու բոպէում երդում է արել մեծ աղմուկ հանել Եւրոպայում ընդդէմ Թիւրքիայի և ի նպաստ հայոց:

Մշակի ազդեցութեան տակ սովելոց յանձնաժողովը յայտարարեց անցեալ Կ. Պոլսի լրագիրների մէջ թէ չուտով հաշիւ կը տայ ազգին: Հետաքրքիր է իմանալ ինչու առաջ այդ չէր անում:

Լսւր է պատում թէ Ծննդեան երկրորդ օրը սուլթանը ընդունելութիւն է նշանակած Ներսէս պատրիարքին. ասում են որ անձամբ պիտի վրատահացնէ պատրիարքին Հայաստանի ռէֆորմների մասին և համոզէ յետ առնել իր հրաժարականը:

Մեծ ուշադրութեան արժանի մի բան է, որ հայերի այսպիսի մի նշանաւոր ցոյցերի ժամանակ հայոց դէմ այնչափ կատաղի մի լրագիր, ինչպէս «Թէրճիմանի Հաքիկատ» որ Սայիդ փաշայի օրգանն է, ոչինչ չէ խօսում հայոց դէմ, այլ միայն խորհրդաւոր լռութիւն է պահում:

Բողոքականների «Աւետաբեր» լրագիրը, յունաց ամենայայտնի լրագիր «Նէօլոգոս» և «Messager d'Athénes» լրագիրները շատ համակրական կերպով են խօսում Ներսէս պատրիարքի վրա և ի նպաստ հայոց:

Երէկ յունաց թագաւորի անուանակոչութեան առթիւ Կ. Պոլսի յունաց դեսպան Կոնդուրիոտիի պալատում կենաց բաժակ են առաջարկել նոյնպէս Ներսէսի համար, անուանելով նրան «հայոց մեծ պատրիարք»: Առհասարակ վերջին ժամանակներս շատ մեծ ձգտումներ են նշմարվում յունաց կողմից հայոց հետ համերաշխութիւն հաստատելու համար:

Օգոնովանը իր արտաքսվելու օրը կանչված է եղել թիւրքաց ատեան լսելու համար սուլթանի կամքը թէ երբ յետ առնէ իր խօսքերը, սուլթանից ներողութիւն կը ստանայ: Սորա պատասխան Օ'գոնովանը ասել է. «սուլթանի թողութեան ես բնաւ կարօտ չեմ, եթէ նաև ինձ անձամբ էլ հաղորդէ այդ թողութեան մասին, մանաւանդ որ երբ այդ մասին հաղորդում ինձ այնպիսի մարդիկ, որոնց իրաքանչիւրը երկու երկու մէջիդով կարող եմ կաշառել: Այս խօսքի վրա վեց ժամ ժամանակամիջոց են տալիս իրան Թիւրքիան թողնելու համար:

Ցրանսիլվանիայի մէջ հայ-կաթոլիկների նոր մեծ աղդային շարժում է յայտնվել. Աւստրիական և ընդհանուր լրագրական աղմուկի ազդեցութեան տակ հայոց մասին, այդտեղի բազմաթիւ հայ-կաթոլիկները բողոք են տուել Աւստրիայի կառավարութեան լատին եպիսկոպոսները վերցնել և նոցա տեղ տալ իրանց հայ-կաթոլիկ եպիսկոպոսներ: Աւստրիական կառավարութիւնը հրամայել է հոգևոր իշխանութեան անմիջապէս կատարել հայոց պահանջը:

Պատրիարքը տեսակցութիւն ունեցաւ լորդ Դիւֆերինի հետ, որը ասեց նորան հետևեալը. «Թիւրքիան այսչափ լաւ ուսումնասիրելուց յետ միայն կարող եմ գնահատել այն արիասրտութիւնը, որով դուք այդչափ բայրաձակ դիմադրութիւն էք անում Թիւրքիայի պէս մի բարբարոս տէրութեան. յայտնում եմ իմ կատարեալ հիացմունքը ձեր սրբազնութեան, և իմ անպայման համակրութիւնը ձեր դատին, որի համար աշխատելուց ոչ մի բոպէ յետ չեմ կանգնում:»

Ուղարկում եմ ներփակեալ «Daily News-ի» մի հեռագրալուրը Կ. Պոլսից և մի մեծ առաջնորդող յօդուածը նոյն համարի մէջ:

Գրիգոր Նիկողոսեան

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Русскій Курьеръ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը ասում է: «Հայոց պատրիարքը չէ համաձայնվում յետ առնել իր հրաժարականը. նա անխախտ է մնում իր վճռի մէջ, չը նայելով որ սուլթանը, Բ. Դուռը և հայոց ազգային ժողովը չեն ընդունում նրա հրաժարականը: Հնուտ մարդիկ հաւատացնում են որ սրբազանը այն ժամանակ միայն կը համաձայնվի նստել իր պատրիարքական աթոռի վրա, երբ ինքն սուլթանը անձնական կերպով կը խոստանայ նրան գոնէ քիչ թէ շատ թեթևացնել և տանելի դարձնել հայերի դրութիւնը: Թիւրքաց մամուլը շատ զբաղված է այդ խնդրով: Անցեալ շաբաթը «Վաքթ» լրագիրը նուիրեց գրեթէ իր բոլոր առաջնորդող յօդուածները այդ խնդրին: Պատրիարքի արիութեան շնորհով Հայաստանի մէջ կատարվելի ռեֆորմների խնդիրը շատ առաջ է գնացել, թէև թիւրքերը լսել անգամ չեն կամենում այդ վերանորոգութիւնների մասին:»

—«Порядокъ» լրագրում կարդում ենք որ անգլիական «Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, որ մի հիւրանոցում հրապարակապէս անպատիւ խօսքեր է ասել սուլթանի դէմ, բանտարկվեցաւ Թիւրք կառավարութեան հրամանով: Նրան մատնեցին մի քանի ադիւտանտներ, որոնք ներկայ էին հիւրանոցում, երբ Օգոնովան իր խօսքերն էր արտասանում:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 դեկտեմբերի: Նովգորոդի զեմստվոն վճռեց. զեմստվոյի առանձին համաձայնութեանը ենթարկել վարչութեան նախագահին կամ անդամներին իբրև էկսպերտ հրաւիրելը: Պեշչուրով հրաւիրված է Ս. Պետերբուրգ Կովկասի վերակազմութեան մասին խորհրդակցելու համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

սերը, ինչպէս վայելում ես քո մնացած հարստութիւնները: Քո հարեմը ամենագեղեցիկ կնիկների մի ճոխ ժողովածու է, մի անապատ հարստութիւն է, ինչպէս հարստութիւն պէտք է համարել քո նժոյգների երամակները, քո ոչխարների հօտերը, քո ամբարանոցների թանգագին մթերքները,—այդ բոլորը ծառայում է քո զուարճութիւնների համար:

—Մթթէ կարելի է այսպիսի համեմատութիւն անել, հարցրեց խանը վշտանալով:

—Համեմատութիւնը ճիշտ է: Զանազանութիւնը նրա մէջն է միայն, որ քո ձիաները, ոչխարները, և ամբարանոցների թանգագին մթերքները զգացմունք չունեն, գիտակցութիւն չունեն, և այդ պատճառով էլ չեն կարող հասկանալ, թէ ինչպէս են վարվում իրանց հետ, և հետևաբար չեն կարող ունենալ դէպի քեզ ոչ սէր և ոչ ատելութիւն: Բայց քո կնիկները այդպէս չեն. նրանք, որպէս բանական արարածներ, զգացմունք ունեն, նրանք կարող են հասկանալ իրանց դրութեան անտանելիութիւնը:

Եօթն տարվայ գերի փակված լեզուն բաց էր եղել: Նա կամենում էր թափել իր սրտի բոլոր դառնութիւնները, բոլոր թոյնը, բոլոր ցաւերը ինչ որ հաւաքվել էին իր գերութեան եօթն տարիների ընթացքում:

—Ինչ որ խօսում ես դու, նրա խօսքը կտրեց խանը, հակառակ է մուսուլմանների սովորութիւններին, հակառակ է մեր օրէնքներին:

—Սէրը ոչ մի օրէնքի չէ հպատակում, պատասխանեց տիկինը,—և ատելի մուսուլմանների օրէնքին: Նա մարդու ազատ զգացմունքն է, ինչպէս կրօնը:

—Դու գիտես, խան, հարցրեց նա,—որ ես քրիստոնեայի աղջիկ էի, դու ինձ գերի վեր առեցիր իմ ծնողների տնից: Իմ հայրը շատ կարդացած մարդ էր, նա սովորել էր մեր ազգի բոլոր նշանաւոր խմաստունների գրքերը: Նա սիրում էր ուսուցանել ինձ շատ բաներ, ինչ որ ինքը սովորել էր: Մեր երկրում իմ հօրը մի անհաւատ մարդ էին համարում, որովհետև նրա կարծիքները, նրա մտքերը տարբերվում էին հաւատաւոր մարդիկների կարծիքներից: Իմ մայրը մի ջերմեռանդ քրիստոնեայ կին էր. նա էլ իր կողմից աշխատում էր կրթել ինձ քրիստոնէական բարեպաշտութեան մէջ:—Ուրեմն ինչու ես զարմանում դու, որ իմ խօսքերը հակառակում են մուսուլմանների սովորութիւններին կամ նրանց օրէնքներին: Ես այդպէս եմ սովորել:

—Ուրեմն դու դեռ պահպանել ես քո քրիստոնէութիւնը, հարցրեց խանը զայրացած կերպով:

Տիկինը մնաց շուարված, չը գիտէր ինչ պատասխանել: Նա իր զատողութիւնների մէջ շատ հեռու գնաց, վիրաւորեց խանի ոչ միայն անձնասիրութիւնը, այլ և նրա կրօնական զգացմունքը: Այդ բաւական չէր, նա մերկացրեց իրան: Այժմ մի կերպով պէտք էր փարատել նրա տարակուսանքը:

—Ես, պատասխանեց նա,—ճշմարիտն ասած, ինքս էլ չը գիտեմ, թէ ինչ կրօնքի եմ պատկանում: Բայց որովհետև մեր վիճաբանութիւնը ամենական սիրոյ վրա էր, շարունակենք դրա վրա խօսել:

Տիկնոջ անորոշ պատասխանը փոքր ինչ հանգստացրեց խանին, նա ասաց.

—Խօսիր:

—Ճշմարիտ սերը պէտք է փոխադարձ լինի, շարունակեց տիկինը:—Իսկ փոխադարձ սէր կարող է կայանալ միայն մի զոյգի մէջ: Բայց երբ որ այրը ունի հարիւր կնիկներ, կամ կինը ունի հարիւր այրեր, այդ դէպքում ճշմարիտ սերը զրկվում է գոյութիւն ունենալուց:

—Ես կարող եմ հարիւր կնիկներ ունենալ և հարիւրին էլ սիրել, ընդհատեց խանը,—այդ ուրիշ բան է, եթէ նրանց մէջ կը գտնվեն այնպիսիները, որ ինձ դուր չեն գալ:

—Դա անբնական է, պատասխանեց տիկինը,—դու կարող ես սիրել հարիւր կնիկներ, այլ խօսքով ասելով, դու կարող ես վայելել ատելի քան հարիւր կնիկներ, բայց հարցը դրանումն է, արդեօք նրանք էլ կը սիրեն քեզ: Որովհետև քո սերը կատարեալ չի լինի, եթէ փոխադարձապէս նրանք էլ չը սիրեն քեզ:—Ես ասեցի անբնական է, այն մտքով, որ դու, որքան էլ ցանկանայիր, չէիր կարող քո սէրը, քո հոգին, քո սիրտը բաժանել հարիւր կնիկների վրա, որոնք կոչվում են քո ամուսիններ: Իսկ ամուսնական սէրը մի անբաժանելի զգացմունք է. նա պէտք է իր զուգակցին միայն պատկանի, երբ բաժանվեցաւ և օտարների վրա,—նա մեռաւ, այլ ևս գոյութիւն ունենալ չէ կարող: Այդ է պատճառը, որ այսօրվայ քո դժբախտութեան բոպէում քո բազմաթիւ կնիկներից և ոչ մէկը չը կայ, որ քեզ ցաւակից լինէր: Որովհետև, նա որ չէ բաժանել քո սէրը, չէ կարող բաժանել և քո ցաւերը:

—Հիմա տեսնում ես, որ դու ընտանիք չունես, առաջ տարաւ տիկինը:—Դու ունես միայն կնիկների մի խուլոր խումբ, որոնց պահում ես երկաթեայ կապանքների մէջ, որոնք հպատակում են քեզ ամենայն խոնարհութեամբ, որովհետև հակառակելու, ընդդիմութիւն գործելու հնար չունեն: Բանտարկեալը կը հնազանդվի իր բանտապետին, բայց նրան չի սիրի: Քո հարեմատունը քո կնիկների բանտն է.—դա ընտանիք չէ: Քո զուակները ծնվում են, մեռնում են, դու ամենևին տեղեկութիւն չունես: Դու գիտես, որ իմ աղջիկը արդէն չորս ամիս է, որ մեռած է. դու գիտես, որ իմ որդին այժմ մահամերձ հիւանդ է: Դու ոչինչ չը գիտես, որովհետև ներքինապետը չէ յայտնել քեզ, մի գուցէ քո ուրախութեան ժամերից մի քանի բոպէ խլած լինի: Քո զուակները ծնվում են, մեծանում են որպէս վայրենիներ: Նրանց դաստիարակում են Աֆրիկայի անապատներից բերված սևերը, որոնք գազանների ոչնչով չեն զանազանվում: Նրանք հարկաւոր դէպքում ոչ միայն իրաւունք ունեն ծեծելու քո զուակներին, այլ ծեծում են և քո կնիկներին:—Եւ այդ բոլոր հրէշաւոր խառնատիպութիւնը դու կոչում ես ընտանիք...

—Քո կնիկները ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ, մեռաքսի, գոհարների և ոսկու մէջ պատած ըստրուկներ: Սորուկը կարող է կին լինել, բայց ամուսին լինել կարող չէ, քանի որ իր ստրկութեան մէջ կը մնայ: Նայիր ինձ վրա, նայիր այդ սենեակին, դու կարծում ես այդ բոլոր զարդարանքը, այդ բոլոր չքեղութիւնը քո սիրոյ համար է: Ամենևին: Ներքինապետը ինձ հրամայեց պատրաստվել և ես պատրաստվեցայ: Իսկ եթէ դու իմ սիրտը այս բոպէում քննելու լինես, նրա մէջ կը գտնես դառնութիւն, ցաւ, անբժշկելի վէրք....

—Ինչու, հարցրեց խանը կատաղած կերպով:

—Ուրեմն դու էլ ինձ չես սիրում:

Տիկինը խոկոյն ուղղեց իր սիալը, ասելով.

—Նրա համար որ, ես արդէն քեզ ասեցի, որ երեխաս հիւանդ է: Մայրը չէ կարող տխուր, վշտացած չը լինել հիւանդ զաւակի անկողնի մօտ:

Դրսից թշնամու թնդանօթները, իսկ իր տան մէջ կնոջ խօսքերը,—երկուսն էլ միօրինակ ներգործութիւն էին անում բռնապետի սրտի վրա: Թշնամին—ճնշված, հարստահարված հայ էր, իսկ կինը—հարեմի ստրուկ: Երկու համանման վիճակներ, որ չէին տարբերվում: Երկու ստրուկներն ևս ապստամբել էին բռնապետի դէմ: Բայց կնոջ խօսքերը աւելի ուժգին, աւելի խորտակիչ կերպով ազդում էին նրա սրտի վրա, քան թշնամու սարսափելի գնդակները բերդի հատատիմն պարսպների վրա: Ընտանեկան կռիւը աւելի սոսկալի էր, քան արտաքին պատերազմը: Կինը բողոքում էր բռնութեան դէմ:

—Ուրեմն ես ոչ մի տեղ մխիթարութիւն գտնել կարող չեմ, ուրեմն իմ ընտանիքս էլ ինձ հալածում է... հարցրեց խանը խելագարվածի նման:

—Ոչ ոք մեղաւոր չէ, պատասխանեց տիկինը:—Դու ինքդ ես պատրաստել քեզ համար այդ վիճակը:—Քո տունը, քո օջախն անգամ բողոքում է քո դէմ...

—Իսկ ես այդ բողոքի թարգմանը կը լինեմ... ասաց իր մտքում Փարիչանը և հեռացաւ սենեակի դռան ետևից, ուր թաքցած, լսում էր նրանց խօսակցութիւնը:

(Կը շարունակվի)

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ուսումնարանի վեցերորդ դասարանի ԱՇԱԿԵՐՏ կամենում է ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՄԲ պարապել գաւառական քաղաքներում կամ գիւղերում: Ցանկացողները կարող են իրանց ՊԱՑՄԱՆՆԵՐՆ առաջարկել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը:

3—3

---

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պասեալա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամբակ յ. 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 -ֆունտ թէյ թէցամանով 1 ր. 65 կ.: եր -կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ:

65—100

---

**ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ** քան թէ ուրիշ տեղ. թէց, կակաո, ՇՈԿՈԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, թէյամաններ, սուրգոկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԻԲՆԵՐ, ՋԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբեթ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ.** պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՋՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէվոլվերների Թիֆլիսում:

75—100

---

**ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ** պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ,** որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ:** Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ:**

98—100

---

## ԲԱԹՈՒՄԻ ԿՕՄԻՍԻՕՆԷՐ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապահարանք:

18—20

---

## Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

ԼՐԱԳՐԱԿԱՆ

## ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

Բաժանորդագրվում են Զմիւռնիայի „ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“ քաղաքական և գրականական հայ ամսագրին. 12 տետրակների գինը 10 ռուբլի է:

Հասցէն. Тифлисъ, Агентство В. Шавердова.

5—10

---

## Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

---

**ՎԱՃԱՌՈՒՄԻ ՄԻՆՉԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ** ամենաէժան գներով. կօնեակ, վիսկի, պօրտվէյն, խերես, շամպայն, մուրաբաներ, սօուս, պիկուլի, բակ, սեմգա, կօնֆեկտներ, ապակու ամաններ, բրիտանական մետալից առարկաներ, սապօն, չուլկի, գուլպաններ, հագուստներ, վարտիկներ, ֆուֆայկա, ալբոմներ: Պանիր չեստեր 80 կ. ֆունտը, արմատներ պլումպուդինգի համար 40 կ., արծաթէ մոմեր 35—42 կ. անգլիական ֆունտը, մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական երկաթէ մահճակալներ 30% էժան քան թէ մի ուրիշ տեղ, այսինքն երեխաների 4 ռուբլուց և մեծերինը 12 ռուբլուց: 50,000 ֆունտ թէյ 1 ռուբլուց և ամենալաւը 2 ր. ֆունտը: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

4—7

---

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բոկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բէվոլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբոմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ: Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.:

30—60

---

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի „ՀԱՑ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ“ առաջին հատորը (ա. գրքոյկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողոված Երևանեան Նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա բ. գրքոյկը: Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միատեսակների հրատարակութեան—ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾԲՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքոյկներով:

Ցուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համազգայինք չեն դլանայ իւրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի այս՝ նոցա ազգ-անունները կը տպագրուեն գրքոյկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողոված-ուն վաճառել՝ թո՛ղ բարեհաճեն յայտնել իրանց պայմանները:

Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով. դնելով ժողոված-ուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. *Тиграну Навасартяну.* Տ. Նաւասարդեանց.

---

**ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ** (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

123—150

---

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ,** մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԼՂ,** մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն:

61—100

---

## ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

Որոնք վաճառվում են ՋԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1 | Բագրատունի՝ Տան պատգամք. գինն է | 25 կ. |
| 2 | Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց. | 50 „ |
| 3 | Թղուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի. | 30 „ |
| 4 | Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ. | 20 „ |
| 5 | Խաթաբալա Սունդուկեանցի. | 50 „ |
| 6 | Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի. | 20 „ |
| 7 | Հայկէն լոսս երեխաների համար. | 50 „ |
| 8 | Տէր-Ակորեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.. | 60 „ |
| 9 | Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնարհումը. | 25 „ |
| 10 | Թագուորեան՝ Փորձ լեզուագիտական հետազօտութեան. | 50 „ |

Եւս ստացուել է Բոստոնի Տէր-Աբրամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ,** գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի:

---

## „ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները Թիֆլիսում կարող են գրուել „Կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բասիյսկիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդ ընկ“ գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.: Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում:

Հրատարակիչ Աբել Դ. Ապրեսեանց

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բանալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրավաճառանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարչական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրաւիրում եմ գրաւոր աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ռուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները ԿՕՄԻՍԻԱՑՈՎ: Իմ հասցէն. г. Эривань, Нерсесу Симеонянцу, магазинъ „Другъ Дѣтей.“ 10—10

---

Զայի և գինու ստաքաններ

Ամենամեծ ընտրանի ամենէն էժան գներով

144 Արծրունու գալերէա 144

ամենաէժան պահեստ մեբելի և հայելիների.

Ծախվում են մեծ և փոքր քանակութեամբ:

Дозволено цензурою, Тифлисъ 28 Декабря 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.